Հոկտեմբեր 2022

Medicare-ը փոխհատուցում է Քովիդ-19 պատվաստումը

Քովիդ-19 պատվաստանյութ

COVID-19 պատվաստանյութն օգնում է նվազեցնել հիվանդանալու վտանգը. այն անվտանգ կերպով փոխազդելով մարմնի բնական պաշտպանիչ միջոցների հետ՝ վիրուսի նկատմամբ պաշտպանություն (իմունիտետ) է զարգացնում: Medicare-ը փոխհատուցում է COVID-19 պատվաստանյութի թարմացված տարբերակով պատվաստումը. Դուք ոչինչ չեք վճարում: Պատվաստանյութի թարմացված տարբերակը առաջնային COVID-19 վիրուսի շտամի և 2 Omicron տարբերակների (BA.4/BA.5) դեմ է:

Եթե իմունային անբավարարվածություն ունեք (ինչպես մարդիկ, ովքեր որևէ օրգանի փոխպատվաստում են արել և ինֆեկցիաների ու այլ հիվանդությունների հանդեպ գտնվում են ավելի բարձր ռիսկի խմբում), Medicare-ը կփոխհատուցի COVID-19 պատվաստանյութի երրորդ դեղաչափով պատվաստումը երկրորդ դեղաչափից առնվազն 28 օր հետո:

Նշում՝ Երրորդ չափաբաժինը ստանալիս մի՛ խառնեք պատվաստանյութերը: Եթե առաջին 2 չափաբաժինները Pfizer էին, երրորդը նույնպես պետք է ստանաք Pfizer: Եթե առաջին 2 չափաբաժինները եղել են Moderna, ապա երրորդը նույնպես պետք է լինի Moderna:

COVID-19 թարմացված պատվաստանյութ

Medicare-ը փոխհատուցում է նաև COVID-19-ի թարմացված պատվաստանյութով պատվաստումները՝ անվճար:

- Եթե ստացել եք Pfizer կամ Moderna COVID-19 պատվաստանյութ, կարող եք թարմացված պատվաստանյութով պատվաստվել Pfizer կամ Moderna COVID-19 պատվաստանյութերի երկրորդ չափաբաժնի ընդունումից առնվազն 5 ամիս հետո:
- Եթե ստացել եք Johnson & Johnson COVID-19 պատվաստանյութ, կարող եք թարմացված պատվաստչափաբաժինընանյութի հերթական՝ երկրորդ ստանալ Ձեր առաջին պատվաստումից առնվազն 2 ամիս հետո:
- Եթե 50 և ավելի տարեկան եք, կամ եթե ունեք միջինից մինչև խիստ իմունային անբավարարություն, Դուք կարող եք ստանալ COVID-19 թարմացված պատվաստանյութերկրորդ չափաբաժինը՝ անվճար, առաջինից առնվազն 4 ամիս հետո: Թարմացված պատվաստանյութի երկրորդ չափաբաժինը պետք է լինի Pfizer-ից կամ Moderna-ից: Պարտադիր չէ, որ այն լինի նույնը, ինչ առաջին COVID-19 պատվաստանյութը:
- Պատվաստվելու գնալիս անպայման Ձեզ հետ վերցրեք Ձեր կարմիր, սպիտակ և կապույտ Medicare քարտը, որպեսզի Ձեր մատակարարը կարողանա վճարել Medicare-ի հաշիվը: Ձեր Medicare քարտը անհրաժեշտ կլինի, նույնիսկ եթե Դուք գրանցված եք Medicare Advantage Plan-ում: Եթե Ձեզ անհրաժեշտ է ձեր քարտի պաշտոնական պատճենը, մուտք գործեք (կամ ստեղծեք) ձեր ապահով հաշիվը Medicare.gov կայքում՝ այն տպելու համար:

Թարմացված COVID-19 պատվաստանյութը (շարունակություն)

- Եթե Դուք լրացնում եք ձևաթուղթ՝ պատվաստանյութ ստանալու համար, Ձեզանից կարող է պահանջվել Ձեր ապահովագրողի խմբի համարը: Եթե ունեք Մաս B, թողեք այս դաշտը դատարկ կամ գրեք «N/A»: Եթե ձևը լրացնելու հետ կապված այլ խնդիրներ ունեք, խոսեք Ձեր մատակարարի հետ:
- Եթե դուք ունեք Medicare և հաշմանդամություն կամ բախվում եք այլ դժվարությունների՝ պատվաստման համար տնից հեռու տեղ հասնելու համար, Medicare-ը կվճարի բժշկին կամ խնամքի այլ մատակարարին, որպեսզի COVID-19 պատվաստանյութով Ձեր պատվաստումը իրականացվի Ձեր իսկ տանը:

Իմացեք ավելին Քովիդ-19 պատվաստանյութի մասին

- Այցելեք Medicare.gov/medicare-coronavirus կայքը՝ COVID-19 պատվաստանյութի՝ Medicare ծածկույթի և այլ հարակից ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար:
- Զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227): TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Այցելեք CDC.gov/coronavirus:
- Կապվեք Ձեր տեղային առողջապահական վարչության հետ՝ CDC.gov/publichealthgateway/healthdirectories/index.html:
- Այցելեք Medicare.gov/coverage/coronavirus-disease-2019-covid-19-vaccine:

Դուք իրավունք ունեք ստանալ Medicare-ի մասին տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ տպագրությամբ, Բրայլի կամ ձայնագրության տեսքով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք Medicare.gov/about-us/accessibility- nondiscrimination-notice կայքը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս ապրանքն արտադրված է ԱՄՆ հարկ վճարողի հաշվին:

CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

CMS Product No. 12117-AR
(Armenian)